

**Անկախ Գնահատող ընկերության կողմից  
Բանկ ներկայացվող անհրաժեշտ  
փաստաթղթերի ու տեղեկությունների  
ցանկ**

---

Անկախ Գնահատող ընկերությունը պետք է Բանկ ներկայացնի հետևյալ փաստաթղթերը (նոտարի կողմից վավերացված կրկնօրինակները կամ Գնահատող ընկերության ղեկավարի ու գլխավոր հաշվապահի ստորագրությամբ և կազմակերպության կնիքով վավերացված կրկնօրինակները) և փաստաթղթերով հաստատված տեղեկություններ՝ ըստ հետևյալ ցուցակի՝

1. Կանոնադրության և/կամ հիմնադիր պայմանագրի պատճեն,
2. Իրավաբանական անձանց՝ Միասնական պետական ռեեստրի մեջ ներառման վկայականի պատճեն,
3. Հարկային մարմնում հաշվառվելու վկայականի պատճեն,
4. Գնահատող ընկերության հաստիքացուցակում ներառված գնահատողների ցուցակ,
5. Գնահատողների կրթական փաստաթղթերի (բարձրագույն մասնագիտական կրթության դիպլոմների, որակավորման բարձրացման, գնահատման գործունեությանը վերաբերող սեմինարներում մասնակցությունը հաստատող վկայականների, սերտիֆիկատների, կրթական այլ փաստաթղթերի) պատճեններ (առկայության դեպքում),
6. Գնահատող գործունեության իրականացման լիցենզիայի պատճեն,
7. Ռիելտորական գործունեության իրականացման լիցենզիայի պատճեն (առկայության դեպքում),
8. Հաշվետու վերջին ամսաթվով հաշվապահական հաշվեկշիռների պատճեններ (ձև 1 և 2)՝ հարկային տեսչության նշումով (անցյալ եռամսյակի ավարտի ամսաթվով),
9. Բյուջետային ու արտաբյուջետային ֆոնդերում պարտքի բացակայությունը հաստատող տեղեկանքներ,
10. Անկախ Գնահատող ընկերության քաղաքացիական պատասխանատվության ապահովագրության վկայականների պատճեններ,
11. Նախորդ 2 (երկու) եռամսյակների ընթացքում գույքի գնահատման (վերագնահատման) կատարված աշխատանքների ցանկ և միջազգային փորձի առկայության/բացակայության մասին տեղեկատվություն,
12. Բանկերի ու ֆինանսական կազմակերպությունների ցուցակ, որոնց հետ համագործակցել է Գնահատող ընկերությունը (ցանկայի են համագործակցության պայմանագրերի պատճենները),

13. ՀՀ տարածքում մասնաճյուղերի և/կամ գործակալությունների (գործակալների) ցուցակ,
14. Գնահատման տիպային պայմանագրերի պատճեններ և գնահատման եզրակացությունների օրինակներ,
15. Մատուցվող ծառայությունների ու սպասարկման սակագների ցանկ,
16. Գնահատողների ինքնակարգավորվող կազմակերպություններից մեկում անդամակցությունը հաստատող փաստաթղթի պատճեն (առկայության դեպքում):
17. Գնահատողների ինքնակարգավորվող կազմակերպությունից հանձնարարական նամակի պատճեն (առկայության դեպքում),
18. Իրացվելիության գործակիցների գործաձման սանդղակ՝ գույքի տեսակից, արժեքից ու գտնվելու վայրից կախված: